պայում, օրինակ Ուսմէ Ցուցան, որ մասնակցել է միջազգային կանանց կօնգրէսներին եւ արժանաւոր աջողութեամբ:

⁂

Ճապոնական կեանքում շատ հետաքրքիր երեոյթ են կազմում այսպէս կոչւած Գէյշաները, երգչուհիները, որոնք Աթէնքի հետերաների նման խնջոյքների ու տօների զարդն են կազմում իրանց սրախօսութեամբ ու նուրբ ձեւերով:

Գէյշաները իրանց կրթութիւնը ստանում են թէյատներում, ուր սովորում են պար, երգ, նւագ, գրականութիւն, այսպէս ասած՝ անցնում են մի գեղարւեստական դպրոց:

Նրանք մասնաւոր սէր են ցոյց տալիս գրականութեան մէջ եւ գրում են երբեմն բաւական աջող:

Ես առիթ ունեցայ նրանց այցելելու մի քանի ծանօթներիս հետ: Մեզ ընդունեցին շատ սիրալիր եւ հրաւիրեցին վեր: Գուլպաներով բարձրացանք սանդուխներից, որ մարդու ապշեցնում են իրանց մաքրութեամբ, եւ մտանք սենեակ խոր բարեւներով:

Իսկոյն կաշւէ բարձեր բերին, որ եւրոպացիներիս համար չոքած նստելը աւելի յարմար լինի:

Գէյշաները բոլորն էլ հագնւած էին գեղեցիկ. հագուստի կտորը գոյնզգոյն, որի վրա բանւած էին քմահաճ պէյզածներ, սարեր ու ձորեր, տուն ու կամուրջ: Նրանք չէին իմանում եւրոպական լեզուներ, եւ այդ թերին աշխատում էին լրացնել առատ ժպիտներով:

Շուտով բերին սամիսենը, որ եռալար գիտարի մի տեսակն է, եւ սկսեցին երգն ու պարը:

Չեմ կարող ասել, թէ մի մեծ հաճոյք ստացանք: